8 նոյեմբերի 2012 թվականի N 1418 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի N 1048-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2012 թվականի աշնան համար մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու, Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1048-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 3-րդ կետում «երկու ամիս ժամկետով» բառերը փոխարինել «մինչև 2012 թվականի նոյեմբերի 30-ը մարման ժամկետով» բառերով.

2) որոշման N 1 հավելվածի 2.1-ին կետում «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզին ամրագրված գնով վաճառելու համար:» բառերը փոխարինել «Հայաս-

տանի Հանրապետության Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Տավուշի մարզերին ամրագրված գնով վաճառելու համար՝ համաձայն N 2 աղյուսակի:» բառերով.

3) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ N 2 աղյուսակով.

«Աղյուսակ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ 700 ՏՈՆՆԱ ԱԶՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Մարզերի անվանումները	Հատկացվող պարարտանյութի քանակը (տոննա)
Արագածոտն	300
Արարատ	256
Կոտայք	132
Տավուշ	12
Ընդամենը	700

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ